ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Անսպասելի և անժամանակ կնքեց իր մահկանացուն հայ մտավորականության մի ամբողջ սերունդ ներկայացնող անվանի գրականագետ Խորեն Սարգսի Սարգսյանը, ինչպես ինքն է բնութագրել իրեն՝

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
Մի հեք նախրցի՝ դնում եմ անկանգ,—

տերյանական տողերը բնաբան դարձնելով իր վերջին ժողովածուի համար։

Այո՛, նախրցի, «մի հե՛ք նախրցի», ծնված անցյալ դարավերջին՝ 1891 թ. Լեռնային Ղարաբաղի հայաշատ ու հայաշեն Շուշի քաղաքում։ Մագումը՝ գյուղացիական չքավոր ընտանիքից։ Միջնակարգն ավարտած 1910 թ. Բաքու քաղաքում։ Հայ բազմաթիվ մտավորականների ճակատագրով բարձրագույն կրթության հասած սեփական ջանքերի և ընդունակությունների շնորհիվ՝ Պետերբուրգ պատմա-բանասիրական ֆակուլտետ։ Հետաքրքրասիրությունը Խորեն Սարգսյանին մղում է զուգահեռաբար ունկնդրելու հայագիտական և վրացագիտական առարկաներ՝ Ն. Մառի, Ի. Ջավախիշվիլու, Նիկ. Ագոնցի լսարաններում։

1917 թ. ավարտում է Պետերբուրգի համալսարանը՝ առաջին կարգի դիպլոմով։ Մեկ տարի Բաքվում ուսուցչական աշխատանք տանելուց հետո, 1921 թ. փոխադրվում է Երևան, որտեղ և հաստատվում է մինչև իր կյանքի ավարտը։

Խորեն Սարգսյանի «անկանգ» կյանքը համընկնում է Խորհրդային Հայաստանի ստեղծման ու վերաշինության ժամանակաշրջանին։ Արյունալի տասնամյակներին փոխարինելու են գալիս խաղաղ աշխատանքի ու ստեղծագործության տարիներ։ Խորեն Սարգսյանը աշխատանքի է լծվում էջմիածնի գիտական ինստիտուտում, դրական արխիվում, դասավանդում բանֆակում, 1923—1927 թթ. ռուսաց լեզվի դասատու զինվորական դպրոցում, 1927—30-ին՝ մանկավարժական ուսումնարանում։ 1931 թ. Հայաստանի պետական թանգարանում գրական բաժնի պետ, իսկ 1935-ից՝ գրական թանգարանի վարիչ։ 1938 թ. աշխատում է ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի, իսկ ակադեմիայի հիմնադրումից հետո՝ ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտում՝ որպես դիտաքարտուղար, 1941-ից՝ դիրեկտոր։ 1955-ին նա նշանակվում է հայ հին գրականության բաժնի վարիչ... Զուգահեռաբար աշխատանք «Գրական թերթում», Գրողների միության վարչությունում, դասախոսություններ բարձրագույն ուսումնական հաստատություններում... և այսպես «անկանգ», մինչև բառիս բուն իմաստով կյանքի վերջին օրը։

Այս ընթացքը։ Իսկ արդյո՞ւնքը։

1. 1000 ձեռագրի նկարագրում և քարտագրում։ 2. Թանգարանում՝ հայ հեղինակների արխիվային ֆոնդերի հարստացում, պահպանում և ժողովրդականացում. 3. Արմֆանում՝ գրական ժառանգության հրատարակում. 4. Դասական հեղինակների ակադեմիական հրատարակության կազմակերպում. 5. Ընագրագիտական բաժնի ստեղծում. 6. Գրականության պատմությունների հրատարակում. 7. Գիտական կադրերի հավաքագրում և պատրաստում. 8. Հայ դասականների ռուսերեն ժողովրդականացում՝ թարգմանությունների ճանապարհով։

Այս բոլոր բնագավառներում անմիջական և

գործարար է եղել Խորեն Սարգսյանի կազմակերպչական մասնակցությունը, իսկ զգալի մասի մեջ՝ նաև հեղինակային։

Խ. Սարգսյանը թողել է գրական հսկայական ժառանգություն, նվիրված հայ գրականության տարբեր շրջաններին՝ հայ հին, նոր ու նորագույն դասականների ուսումնասիրությանը, սկսած Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության» երկհատորյակի գրականագիտական սիստեմի բացահայտումից, մինչև Հ. Քոչարի «Նահապետ» վիպակի, Պարույր Սևակի ու Համո Սահյանի ստեղծագործությունների գնահատումը։

Զարմանալի ամբողջական ու կուռ է Խորեն Սարգսյանի գրականագիտական համակարգը. կարծես տասնամյակներ չի անցել Լևոն Շանթի և Ակսել Բակունցի գրական դիմանկարներին նվիրված նրա քննությունից, մինչև Սայաթ-Նովային, Թումանյանին, Տերյանին, Ստեփան Զորյանի գողտրիկ պատմվածքներին ու վիպապատումներին նվիրված հետազոտությունները։ Խորեն Սարգսյանի գրական անհատականությունը անեղծ է մնացել։ Նրան չի հետաքրքել ամեն ինչ՝ ամեն կողմից, այլ գրական-գեղագիտական որոշակի հարցադրում՝ որոշակի դիտակետից։ Խոսքն, անշուշտ, չի վերաբերում նրա գիտական կյանքում հարատև էշ կազմող որևէ հեղինակի, հենց Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործի համակողմանի ուսումնասիրությանը կամ հայ գրականության պատմության համար գրված հատուկ գլուխներին (օրինակ՝ «Ռաֆայել Պատկանյան»)։ Ուշադրություն դարձնենք լոկ մեկ գրքի՝ «Տասնամյակների միջով» ժողովածուում ընդգրկված նյութերին. «Տերյանի ուղին», «Թումանյանի քառյակները», «Ռավեննան և Արարատը», «Սայաթ-Նովյան երանգով, չարենցյան հղացումով», «Մարդու իմացման փայլատակումը», «Ազատության գաղափարը Նալբանդյանի աշխարհայեցողության մեջ», Իսահակյանի «Ողջույն բոլորին» բանաստեղծությունը, Ստ. Զորյանի «Խնձորի այգին», Մ. Արմենի «Հեղնար աղբյուրը» և այլն և այլն։

Հիշյալ ոչ մի հոդվածում նպատակ չի դրվում համակողմանի քննության ենթարկել հեղինակին։ Խորեն Սարգսյանը ծիածանային երանգավորումների, խոսք-հնչունային պատկերավորումների, մանրանկարային հյուսվածքների վարպետ է, որ ոսկերչական գոհունակությամբ է արժեքավորում գյուտ-գոհարները, խոսք-մարգարիտներն ու կայծ-շառափումները. «Բակունցն ունի մի սովորություն,— հանդարտորեն, կարծես ինքն իր հետ է խոսում արվեստաբանը,— որ գերազանցորեն հատուկ է չափածո գրվածքներին։ Ածականը դնում է գոյականից հետո՝ «ալիքը պըղտորը», «Դրմբոնը նահապետականը», «Գյուլբահարն այրիս»։ Նախադասելու նման ոճը... երգի մի պատառ է մտցնում Բակունցի պրոզայի մեջ։ Կամ՝ «Վահան Տերյանը ունի մահվան նվիրված երկու բանաստեղծություն, որոնցից մեկը սկսվում է «Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում...», երկրորդը՝ «Իմ գերեզմանին դուք չմոտենաք...» բառերով... Այս երկու բանաստեղծություններում իրապես ո՞չ մահ կա, ո՞չ թաղում, ո՞չ գերեզման։ Այստեղ կան միայն այդ երևույթների դալկացած մտապատկերները, որոնք նորից ստեղծում են տխրություն, նկունություն, resignation-ի այն տրամադրությունները, որ բնորոշ են «Մթնշաղի անուրջներ» շարքին»։

Ինչպես տեսնում ենք, մասնակին ոչ թե ինքնանպատակ է դիտվում գրականագետի կողմից, այլ միշտ քննարկվող հեղինակին բնորոշ գեղագիտական համակարգում, մասնակին իբրև բնորոշի արտահայտություն։ Սա գրականագիտական այն հմտությունն է, ճաշակը, որ աչք չի ծակում, սակայն բխում է գրականության սպեցիֆիկայի իմացությունից ու զգացողությունից, այսինքն՝ այս է գեղարվեստական երկի վերլուծությունը։ Երկի գաղափարներն ու բովանդակությունը ամենքին են տեսանելի, բայց ստեղծագործության հեղինակային հորինվածքի թռիչքներն ու հյուսումները՝ տեսանելի միայն նրբաճաշակ գրականագետին։ Այդպիսին էր հենց Խորեն Սարգսյանը։

Եթե սրա վրա ավելացնենք նրա մարդկային նկարագրի ուսանելի բարեմասնությունները՝ աշխատասիրությունը, կարգապահությունը, պարտաճանաչությունը, իր և ուրիշների հանդեպ խստապահանջությունը, երիտասարդ կադրերի նկատմամբ արտակարգ հոգատարությունը, կյանքի ամեն մի օրը իմաստավորելու ճաշակը՝ գեղեցկորեն ներդաշնակված թումանյանական կենսասիրության հետ, ծանր օրերին դիմակայելու փիլիսոփայական տոկունությունը, առաջացած տարիքում միշտ նորը և առաջադիմականը զգալու և գնահատելու ապշելի զգացողությունը, բարեկրթությունը, ընտանեկան և ընկերական կյանքում ներդաշնակությունը, ապա այս ամենը ինչ որ չափով միայն կուրվագծեն Խորեն Սարգսյան գրականագետի և մարդու կերպարը, որի հեռացումը մի բաց տեղ «թափուր գահ» թողեց ժամանակակիցների սրտում։

Մեզանից հեռացավ հայ գրականության «անգով ուխտավորը», մի ամբողջ սերնդի հոգևոր ուսուցիչն ու մկրտիչը, ընկերն ու բարեկամը՝ անջնջելի ու կենդանի հետք թողնելով բոլորիս սրտում։

ՄԱՅԻՍ ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ